բաւ կոյս դրացուն իւրոյ ընդ իւր առ հիւսիս կոյս և ձգելոյ ձիւն տան առ հիւսիս կողմ։

ԳԼՈՒԽ ՄԾԱ.

Ամենայն տուն ունի արձակութիւն ձգել ձիւնն տանն իւրոյ առ փողոց սահմանն տան իւրոյ, և նմանապէս յեղուլ ջուրն անձրևաց։

ԳԼՈՒԽ ՄԾԲ.

Ամենայն մարդիկ որք դրացի լինելով տանց կամին կազմել զտունս իւրեանց մինչև ցեօթն աստիճանս բարձրութեան, պարտ են տալ տեղի մի քայլ երկրէն իւրմէ առ հարաւ կոյս դրացւոյ վասն հեղելոց ջրոյ և այլն, և եթէ դրացին ոչ կամի 'ի բարձրութենէ նորա տեսանել տուն իւր կարող լինիցի շարել պարիսպ այնքան բարձր որ ինքն կամեսցի առ 'ի արգելուլ տեսարանն բարձրաբերձ տանց։

ԳԼՈՒԽ ՄԾԳ.

Եթէ բարձր աստիճանիւ տուն գտցի առաջագոյն շինեցեալ 'ի նմա հիւսիս կոյս յետոյ, ով որք յապա շինողք տանց իւրեանց կարող լիցի 'ի վերայ երկրին իւրոյ շարել պարիսպ որքան բարձրութեամբ որ ինքն կամեսցի 'ի անտեսչութիւն մէջ տան իւրոյ և հեղիցէ ջուր և ձիւն առ տուն և փողոցն իւր։